ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«02» մարտի 2021թ. N ՄՈ/66-2021

ք. Արմավիր

«ԾԻԱԾԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 26-ի N ՄՈ/64-2021 և 2021 թվականի փետրվարի 26-ի N ՄՈ/65-2021 որոշումները, «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով,

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լարիսա Մկրտչյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Գ. Գևորգյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ.Մաթևոսյան***

VERIFIED OCSP 02.03.2021 10:04:01 GMT+4

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2021 թվականի մարտի 08-ի

N ՄՈ/ 66-2021/որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

Անդամներ՝

Ջ. Եղոյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ

Ն. Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ

Հանձնող՝

Գոհար Գազազյան - «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն

Ընդունող՝

Նունե Կարապետյան - «Ծիածանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

02.03.2021

VERIFIED OCSP 02.03.2021 09:46:18 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023